իշխանական կամ նախարարական տները կազմակերպուած էին, բայց սուրբ ձեռքերին, մինչ իրար դէմ էին կռուում. եւ իրար ջնջում, որ իրարից խլեն գաւառները եւ ժողովուրդը: Այս պայքարին վերջ է տրուել նախ՝ Խալդէական-Բաբելական իշխանութեան չրջանում, ապա Հաթթական եւ Ասսուրական պայքարի՝ աշխարհակալութիւնների պատճառով, որով դաշնաւորուել, կամ մի հզօրի իշխանութեան միացել են ընդհանուր թշնամուն դիմադրելու համար: Այս պարագայի զարգացման պատճառով զարգացել է Ոստանիկ-Սեպուհների եւ երկրագործ ժողովրդի առեւտուրը: Մեր երկիրն այնքան առատաբեր չէ, ինչպէս եւ Պարսկաստանը, որ Պատեղեններին տասանորդ տալուց յետոյ, պետութեան կամ արքայից-արքայի ընդհանրական դանձարանին էլ հարկ վճարէին — տասաներորդ տային: Եդիպտոսը, Սանարի դաշտը եւ ուրիշ տաք երկրների աշխատաւորը հողի հասոյթի երեք քառորդը իշխանաւորներին կարող էր տալ եւ մի քառորդով ապրել, բայց Իրանի եւ Հայաստանի արդիւնաբերութիւնն այնպէս չէր կարող լինել, որ թէ՛ նախարարներին եւ թէ՛ պետութեան մի-մի տասաներորդ (20%) վճարէին բերքից:

Այս վէճերն առաջացրին Զրադաշտին, այս վէճերն ստիպեցին աշխարհակալներին, որ երկրագործից միայն մի տասաներորդ